

11436

891.99
4-66

ԱՒԵՔԻ ԿՈՇԻՆԵԱՆ

GLORIA VICTIS



2003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՇԻՆԵԱՆ
№ 2

391.99

4-65

46

44


4-5

ԱՒԱԳ ԿՈԾԻՆԵԱՆ

GLORIA VICTIS

1007-
31842

«ՊԱՏԱՆԻ»-Ի
ԳՐԱԴԱՐԱՆ
№ 2



3297

ԱՇՆԱՆ ՆԻԱԳՆԵՐ

PROLOG.



Ես կամենում եմ գրել մանուշակի մապին,
որ բոյլիկոր ու բուրադար ընկած է յուշագրիս
թերթերում, ինչպէս փարաւոնական մի մոմիա՝
պիրամիդների աւերակների տակ...

— Յանկացար, որ մի հէքիաթ պատմեմ.
այժմ լսիր, ունկնդիր ինձ, ես սկսում եմ
պատմել: Բայց հէնց այսպէս, յանկարծ, մէկէն:

— Ոչինչ, ես կը պատմեմ:

— Բայց ինչի՞ մասին:

— Սիրոյ:

— Լսիր ուրեմն. «Սկզբում սէրն էր և
սէրն էր ոճիր...»

— Ի՞նչ, դու ծաղրում, քնծղում ես ինձ,
որ յանկարծ ճշմարտութիւնը յայտնեցի:

— Այժմ էլ հարցնում ես՝ ի՞նչ է ճշմար-
տութիւնը:

— Ծշմարտութիւնը մի պատրանք է, որին
ձգտում են հասնել, տրորելով նրա շիրիմները
հոգու մէջ:

— Նորէն հեզնում ես.— Էհ, իմ հէքիաթը
չի պատմւիր երբէք:

— Տարօրէն է. ահա... ուրեմն չեմ ցանկա-
նում լսել:

— Բայց դու կամեցար՝ մի հէքիաթ պատ-
մեմ...

Բայց դու ինչո՞ւ այդպէս սիրում ես ա-
շունը՝ լուռ, խաղաղ և անդոյրաւէտ աշունը,
երբ մեռնում են համասփիւռ համրութեան մէջ
ցօղ ու ծաղիկ, սաղարթ ու երգ, տերև ու սօ-
սափ: Յիշում ես, հէնց այսօր մենք քայլում
էինք մեծ ճանապարհին և դու շնջացիր.

— Այնպէս սիրում եմ աշունը:

Իսկ դու դեռատի ես, դեռ երգ ու խինդ,
ժպիտ ու արցունք կայ հոգուդ մէջ, երեսիդ,
աչքերիդ վրայ, հեղահամբոյր շրթունքներիդ:

— Ա՛խ, դու գունատ ես ու դալկամած,
աշնան պէս խորունկ ու անհուն վիշտ ունիս:

— Բայց դու դեռ կարող ես ապրել, սպա-
սել նորոգ գարնան գալուստին:

Եւ ինչո՞ւ այդպէս սիրում ես աշունը:

- Լսիր, միայն մի ակնթարթ...
 - Փամանակն անբաւելի է:
 - Միայն մի ակնթարթ մեռնողը կամեցաւ...
 - Ի՞նչ, առա՛ շտապում եմ ես:
 - Կամեցաւ ապրել, որ տեսնի...
 - Ի՞նչ:
 - Նա դեռատի էր...
 - Յետո՞յ:
 - Կամեցաւ տեսնել՝ ի՞նչ կը կատարւի իր մահից յետոյ:
 - Յիմարութիւն...
-

- ...եւ ոստը թօշնեց:
 - Այդ տարօրինակ չէ:
 - Թօշնեց, որովհետեւ մայր ծառը հիւ-
ւանդ էր:
 - Ի՞նչ անենք:
 - Ոստն անկարող էր ապրել, իսկ զարուն
էր, և նա այնպէս կամենում էր ապրել. ծագում
էին այգն, առաւօտն ամպերն ու արեւ, զարթ-
նում էին յոյսեր, տենչանքներ ու բոյրեր:
 - Մեռնելուն կը մեռնի. միթէ պիտի
ցաւել:
 - Բայց ոստը կամենում էր ապրել...
-

— Այժմ դու ծաղիկներ ես բերել ինձ...
Տեսնում եմ:

— Յիշում ես, որ դարձան խնդրեցի մայիս-
եան ծաղիկներդ՝ պերճ, բուրավետ ու փարթամ:

— Եւ դու, յիշում ես, մերժեցիր:

— Այժմ թող աշնան այդ դալկահար ծաղիկ-
ները: Նրանք տեսնում ես՝ մեռնում են, շողեր
չը կան այլևս. տես՝ թօշնել են ինչպէս:

— Դամբանների ծաղիկներ:

— Տուր ինձ, և կը նետեմ ես մեծ ճա-
նապարհը, և թող հողմերը անհետ ճամբաները
լիզելով, տանեն անյայտ շիրիմներին:

— Աշնան բոյրագար, թօշնած ծաղիկներդ
չեմ կամենում ես:

— Տար անյայտ շիրիմներին:

— Էլ ծաղիկ չեմ ցանկանում ես...

— Ծաղիկներ՝ անբիծ, հոտաւետ ու չքնա-
ղատես շուշաններ, մանուշակներ, մելալիներ ու
նարգիզներ փնջեցի, երբ այգին էր ծաղկում, և
լոյսը ճառագում, երբ սուեր ու շող խայտալով
փարում էին մարգերը:

— Յամայր որոնում էի նրան՝ փունջ մա-
տուցելու:

— Աշխարհում որոնեցի և չը տեսայ նրան:

— Այդ ինչ էր. ուրեմն ես հանդիպեցի:

— Բայց այդ լոկ մի շիրիմ էր, նրա շի-
րիմը:

— Նա ինձնից առանջ էր միթէ ապրել աշ-
խարհում:

Երկիւղած ու ծնրադիր, ես դրի նրա
դամբանին իմ փունջը:

— Բայց այն արդէն թօշնած էր...

— Յանկացար՝ պատմեմ վտակի մասին, որի պաղպաղներն էիր նետում գարնան ծաղիկները՝ բոյլերով, բոյրերով պերճօրէն:

Յիշում ես, այն ծաղիկները դողդոջ գահավիժում էին, դու նետում էիր, և լուռ գիշերին աստղերն էին իջնում վտակի հայելիները՝ ծնրադիր ու երեք երկրպագելու քեզ և ծաղիկներդ՝ բոյլերով, բոյրերով պերճօրէն:

— Այժմ աշուն է. վտակը լւօրէն վայր է հոսում, և այն գեղածիծաղ մարգէրը չը կան: Իսկ նա խոխոջում է և միայնակ ու յուսազար իմ հոգին հողմերգին ունկնդիր՝ թափառում է այնտեղ և որոնում է նա՝ պաղպաղներ ու գարուն և ծաղիկներ ու աստղեր: Եւ վտակը խոխոջում է մշուշի մէջ, ինչպէս իմ հոգին՝ լքումի.— «Երէկ՝ ինչ այսօր, այսօր՝ ինչ երէկ, գարուն էր երէկ, և աշուն է այսօր, գարուն էր երէկ, և աշուն է այսօր:

Ինչ՝ երէկ, այն՝ այսօր...»:

Յիշում եմ՝ մի անգամ էլ անցայ այս ամիսներով՝ գարնան սօսափներին, պայծառ արփու ջինջ, լազուրէ քօղով պարուրւած շողերի, կայտառուն, ժանեկազարդ մով ջրերի նազանք հայելիների, խայտուն գեփիւնների և վաղուց մուսացւած դիւթանք-մեղեդու դայլայլներով, որ գեղգեղում, գալիս էին կոհակների թևերին միշտ հեռաւոր, գեղածիծաղ ամիսների:

Վերադարձիս երերում եմ այս պաղ, պողպատ ամիսին. մշուշը հեռուն ծունր է քշել, և կանաչ, սառն ալիքները փրփուրէ ժանիքներով կոփում են ժայռերը, դիզանում իրար վրայ, փշրում վիմուռքներին, լալիս սառուցէ արցունքներով:

Ի՞նչ գորշ ու ամայի են այն վաղեմի ամիսները հիմա:

— Յիշում եմ՝ մի անգամ էլ անցել եմ այս լալկան ամիսնով...

— 'Ի՞նչ պահանջում ես քո 'նւիրած' փաթեթում, ինչպէս աստղագարդ ամառային գիշեր և բուրաւէտ, որպէս այգը մայիսեան՝ դալար ծաղիկները:

— Բայց ես կորցրի. չը գիտեմ...

— Ո՞ւր, որտե՞ղ, — հարցնում ես:

— Նրանք չը կան, այն գիշեր ու այդ ծաղիկները... Նրանք չը կան...

— Ես կորցրի... Չը գիտեմ՝ ո՞ւր... Երբ...

— Իմ հէքիաթը կը պատմեմ ես քեզ, միայն քեզ: Լսիր, ինչպէս կաթոգին երկինք ու վարսերդ փոխի իմ կրծքի վրայ, գէթ մի ակնթարթ, գէթ մի ակնթարթ, ինչպէս մի հանգուցիչ մի գիշեր:

Իմ ուղին միշտ ձմեռ է ու բուք և մերթ՝ աշուն դալկահար: Ես քայլում եմ տիղմի մէջ, ձիւների երեսին, որպէս անյայտ ասուպն երկնի ամպերում, որպէս հիւլէն ովկիանի վրայ: Եւ որոնում եմ կենդանիներին, փնտրում եմ մերձիմահներին, կեանքի հեքով տրոփողներին:

Իսկ իմ ուղին միշտ ձմեռ է ու բուք, միշտ շիրիմ ու դամբան:



օր. Ա-իմ

— Լալիան աշնան անծայրածիր դալկանքի մէջ ինչ վայելում է քեզ այդ սև զգեստը:

Մի օր, յիշում ես, քեզ հարցրի,

— Ինչո՞ւ սև ես հագել, քոյրիկ, ինչո՞ւ այդպէս սև. անյայտ դամբաններից արդե՞ծք, վիշտը քաղեց նոճիների սևակնած տերևներն ու կարծաւ հիւսեց քեզ համար այդ սևորակ հանդերձները, յոյսը, գորովալիւր ու քնքոյշ ինչպէս մահը, պսոյ փայլ տւեց մթազին աչքերիդ:

— Յիշում ես, ես մի օր հարցրի քեզ:

Եւ դու դալկօրէն հառաչեցիր:

— Միթէ նոճիների տերևների հեծեծանքն էր այդ...

— Բայց ուրքան վայելում է քեզ այդ սև զգեստները:

Ինչ լաւ են աշնան երեկոները:

Եւ նա երազում տես կը գայ ինձ. կը փոփիլը վարսերը կրծքիս, իր ժպիտները լուսվէժի նման կը տարածի երեսիս, իր հայեացքով կը փաթթի միտքս ու հոգիս և կը պատմի իր յաւերժեան հէքիաթը:

— Ես սիրում եմ աշունը:

— Ես սիրում եմ աշնան գիշերն ու երեկոն:


— Ես սիրում եմ դալկահար մահն անտառի, շնչահեղձ վախճանը կարկաչների, վտակի, այլազունած թօշնանք մարգերի:

— Ես սիրում եմ ուժասպառ, հևասուն մարացքը շողերի,— և պապանձումը ժայռերի:

Նա կը գայ, թերևս այժմ, իմ այս արթմին ժամերին:

Ինչ լաւ են աշնան երեկոները...

1007
31842



(Կեանքի աղօթքներէց)

— Ո՛վ էլ լինիս, *հւր էլ լինիս, միթէ երբէք չը պէտք է շնչամ գրկիդ.*

— Սիրում եմ ես քեզ:

— Ո՛վ էլ լինիս, *հւր էլ լինիս՝ մթնշաղի պէս անըջային էակ, արշալոյսի շողերի նման դողդոջ, դայլայլների հանգոյն զմայլ և որպէս մի վերջալոյս դիւթական՝ միթէ երբէք չը պէտք է հեկեկամ կրծքիդ:*

— Սիրում եմ ես քեզ...

Ա Մ Պ Ե Ր

Ամեն օր, մթնշաղի ժամերին, գորշ ամպերը ցնցոտաւոր մութացիկների նման իրար են փարում իրենց կմախքներն ու իջնում իմ ճանապարհի վրայ:

Նրան, ում սիրեցի մի վայրկեան

Հ Է Ք Ի Ա Թ

— Լսիր, ինձ:

— Սյժմ, երբ մթնշաղն իջնում է հեռաւոր դաշտերի անծայրածիր մարգերին ծուներ դնելու իրիկնաժամի ղողանջներով, և ստուերները դողդոջ ու երեր ձգւում են, համբուրում քղանցքները սև հանդերձներիդ, գլուխդ դիր իմ կրծքին, և գիտեմ՝ սիրտս յամրագին կը բաբախի, ինչպէս նւագող վերջալոյսի դալուկ շողերն անտառում, ու կը պատմեմ քեզ իմ վերջին հէքիաթը, և որպէս մի խեղդող վտակի կարկաչ կաշկանդող սառոյցից, կը դողդողայ իմ ձայնը բէկբէկ:

— Լսիր, ինձ:

— Սոխակն եղեմում կամենում էր սիրել և ծաղիկներ էր որոնում, եղեմային խնկաբոյր ծաղիկներ: Նա թռչում, լողում էր եղեմի բո-

րածագ բոսրանքի մէջ և որոնում, որպէս անապատի պապակած ճամբորդն ուժատ: Թփներին բոյլիկոր՝ իրենց թերթիկները բանալով, դիւթում կանչում էին պերճ ու բոլրաւէտ ծաղիկները:

Եւ սոխակը չէր նստում թփերին, և սոխակը չէր սիրում ոչ մէկին: Արշալոյսին, յոգնած ինչպէս աշնան մի թօշնած տերև, թառեց վարդի թփին: Ուժասպառ սոխակի սիրտը թոյլ բաբախում էր, երբ՝ ինչպէս ծիածանն երկնին, ինչպէս խնկոցը աղօթքների, բոյրերի ու խնկի ծխի փորթեցին թերթիկներն ալ ու ծիրանի, որպէս բոսրանքն եղեմի, որպէս բազմերանդ խայտանքը կոհակների, վտառների, շողերի:

Եւ սոխակը հոգեվար վարդի թփին, փշայեղց ու արիւնոտ իր կրծքից դողաց թրթիռը սիրոյ անդրանիկ դայլայլի:

Սոխակը սիրեց և երգեց:

Սիրեց և երգեց:

— Բայց՝ մեռնելիս, մի ակնթարթ, միայն մի ակնթարթ...

Որպէս անապատի մի ուխտաւոր, նրա ծոցը գնացի ես:

Եւ որոնեցի այն դալար, փարթամ ու բուրաւէտ ծաղիկները դարնան:

Հին անտառում իմ ծաղիկները խշրտում էին, ցրւում ոտքերիս տակ, որպէս հողը դամբանների:

Եւ որքան դամբաններ ունիմ ես այնտեղ՝ համր անտառում:

Ես հարցրի անտառին:

— Ո՛ւր են իմ ծաղիկները, ո՛ւր են իմ պերճասուն ծաղիկները, տո՛ւր ինձ մէկը, գէթ մէկը:

Անտառը վիշապի մթազնած գեղմի նման խոշիւնեց իմ գլխիս վերև:

Անտառը, համր անտառն աշնային...

Այսօր մերկ անտառների կոյր սաղարթները լիզելով իմ մնարին խաղում են դողդոջ շողերն աշնան հոգեվարքի արփու, որ մզլած ապակու նման արձակում է պաղ ցուլքեր, որպէս հեքը մահամերձի, որպէս թալրտիւնը խեղդողի:

Այն իմ արփին է մեռնում երկնքի ցնցոտիներով պարուրւած, աշնան արցունքներով կուրացած:

Իմ արփին, սէգ արփին երբեմնի, որ ծագում էր բոսոր ամպից, որ փնջւում էր շող ու բոյրից...

Իմ հայրենի այս վեհապանձ բարձունքին կարօտեցի ես քեզ:

Կարօտեցի, ինչպէս անդունդներում կաշկանդւած սուերները՝ շողերին, ինչպէս յաւերժ ձիւնապատ գագաթները՝ ծաղիկներին, և լերկ ապառաժները՝ բոյրերին:

Իմ առջև ձգւում է երկար առապարը դերբուկէ սապատներով:

Այնտեղ, ուր մութն ու ձորերն են իրար փաթթւած՝ վեր ելնել սկսեցինք մենք: Քայլում էինք միասին:

Եւ մի պահ անց՝ դու ինձ հետ չէիր:

Դու յառաջ էիր անցել և քայլում էիր օտարի հետ, դեղածիծաղ ու ժպտալիւր շողերին խճողելով երջանիկ զոյգի քնձղանքները:

Ես հետևում էի ձեզ, երազով դերբուկների ու վիհերի վրայ, անվերջ նախանձելով ու կարօտելով ձեզ:

Երբեմն քո խորոպական ժպիտները ջերմացնում էին ինձ:

Այժմ դու չը կաս, այժմ է, որ մենակ եմ ես:
Միայնակ այս վիհաթառ, երկնամերձ բարձունքներին:

Եւ կարօտում եմ քեզ՝

ինչպէս անդունդների սաւերներն՝ այս երկնածիր շողերին, ինչպէս այս ձիւնաթոյր գագաթները՝ բուրասուն ծաղիկներին:

Դու կը գտնաս, կը հանդիպես ինձ՝ գէթ մի ակնթարթ:

Սէգ բարձունքների երկնասլաց կարօտով դեռ սպասում եմ քեզ...

Լ Ք Ո Ւ Մ

Այժմ...

էլ ոչ ոք, էլ ոչ ոք:

Իմ հոգին աւերակ է վերստին:

Ամայի է, որպէս մութի մի դամբան, ինչպէս կորած ու հանգած շողերի պատանք:

Ես ձգտեցի քեզ, ես հասնում էի քեզ...

Մինչև դեկտեմբերի իննը գիշերն երկարում է, օրերը նւագում են, լոյսը տրոփում երկնային գորշ ճահիճի մէջ մահամերձ հոգեվարքում: Այժմ աշնան մի օր է. սոււերները դողալով փարել, կաշկանդել են ամեն ինչ:

Իմ սենեակի պատուհանն ու դռներն ամուր փակում եմ, և ցոլքերը գորշ սոււերների հետ հեալով բախում են լուսամուտիս դալուկ ապակիները, կարծես՝ նրանք ձգտում են ներս թափանցել, կարծես՝ տենչում են իմ գոց սենեակի համը մութի մէջ մեռնել:

Երէկ գրասեղանիս մի դեղին ու թօշնաց տերև տեսայ:

Ինչո՞ւ էր նա այստեղ, յուշագրիս մօտ ընկած, երբ այժմ չը կայ, էլ չը կայ: Ո՞ւր կորաւ իմ տերևը: Բայց ինչպէ՞ս ցոլանում էին այս մահամերձ շողերը նրա վրայ:

Իսկ ուռնին, բակի սգատերև այդ ծառը, որ իր դալկութիւնից սարսափահար, դողում է շարունակ: Ինչքան միջատներ կան նրա տերևների ու սաղարթի մէջ: Նրանք երբեմն ժիրանքով գեռում էին, իսկ այժմ անշնացած ընկել են շիւղերի խոռոչներում կոյտերով ու պապանձ:

Որքան հետաքրքիր է նրանց դիակները դիտել. — աննկատ կաթում են ցած ուռնի ու արցունքները հետ, որոնք այժմ մաղւում են իմ գլխիս վերև, աշնան մառախուղի մէջ...

Ես սարսափահար դուրս փախայ իմ սենեակից. քայլում եմ, չը գիտեմ՝ ո՞ւր:

Այս գիշեր արդէն չեմ կարող ապրել. հեղձամահ կը լինիմ:

Հէնց այժմ կըսկսի մութը բարձրանալ և խաւարը փռել այս անծայրածիր դամբանի վրայ ու կը թաղի մէդի մէջ ամեն ինչ, ամեն ինչ:

Սև անտառների տակ դիակնացած լեռներից վայում է քամին: Այդ նրանք են՝ պերճազուն, սէգ ու վիթխարի երբեմն, որ այս ալանակիր երեկոյի հետ պոթկում են իրենց վերջին շունչը:

Եւ լալագին, սրտմաշուկ դողով մոլոր օձերի պէս սողում են արցունքները նրանց, վերջին արցունքները լերկ այտերից—

Վտակները— ծաղկագորով...

Ձը գիտեմ՝ ամսի քանիսն է այսօր, չը գիտեմ՝ ժամը, բոպէն ու վայրկեանը: Իմ սենեակի անշուք պատին, ուր ամրացրել եմ վաղուց մոռացած միակ ընկերոջ, բարեկամի կամ ծանօթի լուսանկարը, միշտ էլ երևում է խոշոր ու կարմիր տառերով.

Դեկտեմբեր

31

Կիրակի

Լուսնի 26

Եթէ մօտենամ, կը կարդամ.—Դեկտեմբերի 9-ից մինչև 31-ը օրն երկարում է 27 րոպէ: Իսկ ներքև մանր տառերով տպւած է. «Ապրեցի այնքան ժամանակ, որքան ստեղծագործեց իմ հոգին»: Թերուս եմ. չը գիտեմ, չեմ էլ ճանաչում այն մտածողին, որ այդ պատգամն է տւել: Առաջ ճգնում էի՝ գոնէ անգիր անել անունը. թերևս հէնց այժմ էլ իմանամ... Բայց... չեմ յիշում: Ոչինչ, կը յիշեմ յետոյ և կը գրեմ յուշագրիս մէջ:

Յուշագիրս գրում եմ, սրովհետեւ ես էլ ցանկանում եմ ստեղծագործել ապրելու համար:

Եթէ թողնեմ այսպէս թերի:

Ինչպէս կը կամենայի իմանալ՝ ժամի քանիսն է այժմ, այս խաւար գիշերին:

Արդեօք, մօտ չէ՞ այգը:

Ես ժամացոյց չունիմ: Եւ ի՞նչ փոյթ, որ չունիմ: Մարդիկ կան, որոնք երբեք ժամացոյց են ունենում: Ես էլ նրանցից եմ: Միայն ես չը գիտեմ ևս՝ այսօր ի՞նչ օր է, և զարոն է գեղածիծաղ, որ արփու գովալիւր ցնցողներէց և ծաղկունանց սոււերներէց հիւսած ժանեակն է սփռում աշխարհի վրայ, թէ մի լալկան, խեղդամահ աշուն: Տարւայ որ եղանակն է իմ այս փակւած, մթին սենեակից դուրս:

Ո՞վ գիտէ՝ եթէ իմանայի, թերևս լաւ կը լինէր. կարող էի յուսալ, տխրել կամ—սպասել:

Այժմ ժամացոյց չունիմ. գիշեր է և չը գիտեմ՝ ղեռ հեռու է այգը:

Իսկ օրացոյցիս միշտ կարդում եմ.

«Դեկտեմբեր, 31, կիրակի, լուսնի 26: Ամսի 9-ից մինչև 31-ը օրն երկարում է 27 րոպէ»:

Ես սիրեցի ծաղիկները
Կարած, մութը ճամբէքի...

Մի՞թէ ես այլևս ծաղիկներ չունիմ: Բայց
յիշում եմ, մի փունջ ունէի գեղատեսիլ ու բու-
րասուն ծաղիկներէ: Իմ անհետ ճամբէքի, ան-
յայտ խորշերից քաղեցի այն ծաղիկները մէկիկ-
մէկիկ և ցօղեցի վշտալիւր ժպիտներով, գուր-
գուրեցի մայիսեան արփու երազ-շողերով, տեն-
չացի աշնան ուռենու մտորուն անուրջներով,
փայփայեցի աստղունանց հեք-ծիծաղներով և
ամպերի տակ խայտող լուսնի բերկրանքով:

Եւ պաշտեցի՝ ինչպէս շիկացած աւազը՝ աղ-
բիւրի պաղպաղներին:

Իսկ այժմ...մի՞թէ ես այլևս ծաղիկ չունիմ:

Երազում տեսայ:

— Գարնան արևի յորդ շողերը ջրվէժի
հանգոյն փուել էին աշխարհի վրայ, և գուր-
գուրում, ջերմացնում էին ամենքին, որպէս
երբեմնի սիրունու թաւ հիւսքները, որոնք ծա-
ւալում էին կրծքիս միջշաղի ժամերին և հէ-
քիաթներ պատմում, որպէս ակեակների փրփուր-
ծիծաղներն ափերի վրայ:

Լսում էր զօղանջ, և աշխարհը չը գիտէր
սրտեղից:

Այդ զօղանջը կանչում էր ամենքին, և ա-
մենքը գնում էին դէպի զանգը գիւթական:

Եւ կանգնած էի ես՝ խորթ ու անհարազատ
այն աշխարհում, բոսոր, պերճանք աշխարհում:
Եւ լոյսի, շողերի մուրացիկ էի ես ու փնտրում
անվերջ—

Լոյս ու շողեր...

Դորշ աշնան մեռնող վերջալոյսին ինձ թա-
ղեցէք մեծ ճանապարհին: Ածեցէք վրաս տերե
ու խոտ՝ բոլորը թօշնած ու թոռոմ՝ ինչպէս իմ
այն յոյսերը, որ պատան կը խնդրեն թօշնած
տերեկից, թոռոմ խոտերից:

Եւ նրանք գրկեն, փաթթւեն իրար:

Մեծ ճանապարհին մութ գիշերները հան-
գստանան և ծուռ իջնեն դամբանիս, և յաղթ
ու գեղադէմ արփին ծաւալէ իր ցնցուղները,
նոր այգի յառնումի նւագները ծաղկունանց
սիմերին թրթռան, և զեփիւռները հանգչեն իմ
վրայ...

Դիւիջան

„ՊԱՏԱՆԻՒ“ ԳՐԱԴԱՐԱՆ

- № 1 Լեոն-Լեոնի—«Իմ էսքիզներից» . 10 Կ.
№ 2 Աւագ Կոժինեան—Cloria victis . 10 Կ.

ԳԻՆԸ 10 Կ.

